

Մովսէս կաթողիկոսի կողմէն տրամադրել իրեն Ղուլուպաշայ վանքը իր կալուածներով եւ էջմիածնէն տարեկան 300 զուռուշ մուտք մը, բայց եւ այնպէս չզիջաւ Սահակ իւր յամառութենէն :

Սահակ եւ Պօղոս վարդապետ մեկնեցան Կ. Պոլիս ստանալու Վէզիրին արտօնութիւնը : Հոն գտան իրենց խորհուրդին համակիր Զաքարիա Վանեցին, որ այն ժամանակ պատրիարքութիւնը կը վարէր. անոր օգնութեամբ ձեռք բերին Վէզիրին բացակայութեան Սուլտանին հրամանագիրը : Բայց որովհետեւ անհրաժեշտ էր Վէզիրին՝ Սոսրով փաշային հաւանութիւնն ալ, անցան Տիգրանակերտ, ուր կը գտնուէր Սոսրով փաշա : Հակառակ տեղւոյն ազգայիններու յորդորին, ներկայացան Վէզիրին. խոստացան տալ արքունի գանձարանին 10.000 զուռուշ եթէ հաւանի Վէզիրը շնորհել իրենց կաթողիկոսութեան արտօնագիրը : Բայց որովհետեւ հակառակ էին Ամթեցիք Աթոռին երկպառակման՝ աւելի մեծ գումարներով շահեցան Սոսրով փաշան Մովսէս կաթողիկոսի ի նպաստ : Վէզիրը պատրուակ առնելով թէ Սահակ կաթողիկոս եւ Պօղոս վարդապետ առանց իր զիտութեան դիմած են Սուլտանին, հրամայեց գանոնք սաստիկ բրածեծ ընել. կա՛մ պիտի տաճկանային եւ կա՛մ ծեծին տակ պիտի մեռնէին : Դժբախտաբար հարուածներու սաստիկութիւնը թուլացուց գանոնք հաւատքի